

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 22

Թիւ 92 — ԺԹ

هزارايداق غزوةسى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արսասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռեքեոս Յ. Պերպերեան ('Իպրոցականի յիշատակներ)

Իմաստասիրական բառարան

Տես. եւ գործ. Մանկավարժութիւն

Իսկային հասած (Վիպակ)

Ամուսնալոյծն՝ ապերջանիկ

Երկրագործութիւն

Խտիղներ

Քիչ մը ծիծաղ

Թէոդիկ

Ա. Լ.

Մ.

Ս. ԲԱԲԷԼԵԱՆ

Բ. Պ.

Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Ս.

40 փարա 40

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը ծախուի. 1. Գաւառացի, Արմեն Էֆ. Զպուգեանի Դեղարանը. — 2. Սա-
մաքիա, Կայարանին մօտ, ծխականաւ Յարութիւն Աղա Էժէսեհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավանաւ Նեան աղա Օգուսեանի փոլ (նախկին ջրավանաւ Պողոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավանաւ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց,
Աւենեան եւ Զարդարեան գրատուններ. — 6. Բոլոր յազրավանաւներուն փոլ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՊԵՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեան դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապտիե հասեալի Թիւ 61

1900



Է Բ Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅՆՈՒՄ ԵՎ ԶԱՆՈՒՄ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀԶՈՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՏՐԱՆՔ

1898ին՝ Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 153/4 ՄԻԼԻՈՆ Ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ Ֆրանսական ՄԻԱՅՆՈՒՄ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ գործառնութիւն ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ պահեստի գրամ ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻՅՏ ընծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՆՈՐՔ

Լոնտոն

Անգլիոյ պաշտօն

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրետի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԹՈՒՐԻՔԻԱՅ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱՇԱՍՏԻՐ

Կ. Պոլիս, Պաշտօն Գարու, Անանիատի Խան

Պատկերագարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱԺԵԱՆ

Գիւն 4 դրու

Լոյս տեսաւ Ն. Պերպերեան մալուր սպագրութեամբ, Բաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն. Մայրաքաղաքիս Է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փնտեցեմք 1900ի սպագրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ու շաղկապեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապէս մեծաքանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Կրէկուառ ՂազարօՅ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասնոյի խան թիւ 1 եւ 2: Եւրոպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէսպիսութիւն մը միտ պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ տեղեւորական համբաւ վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դերերը ու ամէն տեսակ հանգային ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք՝ ճշդիւ ու փութով կը կատարուին, անմրցելի կերպիւ ածան գնեցով:

Դիմեցեմք եւ պիտի համոզուիք:

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական



ԽԱՐԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

ԲՐԻՋՄԱՆԻ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ


Գ. Շրջան

1900 Ապրիլ 22

Թիւ 92 — ԺԹ

ՌԵԹԷՈՍ Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

[ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՕՒՇԱՏԱԿՆԵՐ]



ԻՐԱԿԱԹ ընտանիքի մը գիրդ ծոցէն նետուիլ յանկարծ կրթութեան բուրաստանը, հ'ոն ուր միտքիդ ու սիրտիդ օր-ըստօրեայ ընձիւղիլը, խնկա-ւետիլը պիտի զգաս, ապրիլ հոն՝ ուր համատի եղբայրներու ընկե-րութեան մէջ տակաւ պիտի զարթնու մէջդ նախանձաշուղութեան ոգին՝ որ յառաջդիմութեանդ ռազմիրան պիտի ըլլայ, ահա՛ վարժարանի սրբասուն կեանքը:

Սրգարեւ կա՞ն յիշատակներ տարի-ներու անգութ հոլովումովը երբե՛ք չը ծերացող, անուշ ա՛յնքան՝ սրբան դըպ-րոցիները. չը գիտեմ ի՞նչ մը ունին ա-նոնք իրենց մէջ որոնց վերյուշքը կա-

րօտի ցաւով մը կը խըխտէ հոգին ա-նո՛ր որ ուսանողի չրջան մը բոլորած է պատանութեանը:

Ես չունեցայ աշխարհիկ կեանքէս դրուագ մը որ կարենար հաւսարիլ տարիներու այն սիրալի փունջին զոր կապած էի ատենօք, ընկերներու գուրգուրոտ համայնքին խառնուած, մինչ դրասեղանին վրայ կըսուն՝ թուղ-թեր կը լեցունէի ու թուղթե՛ր կը դարձունէի:

Դպրոցական չրջանիս երջանիկ վայր-կեանքներէն հաշուէ, — որոնց մէջ գլուխս սեղ մը ետի կը տանէի՝ խմուած դաս մը ուղիսօրէն պոռթկալու դասատուին, — մինչեւ տհաճ ժամերը՝ ուր ծուլու-թիւնը կը վարձատրուէր լռելեայն՝ օրա-դրութեան մէջ անուսիս առջին փոր-ուող ծակով մը, «օգնելներս՝ քովինիս

յուշարարութեամբ, ու մինչեւ խօլ բզէ-
զութիւններս զբօսանքին եւ չարածնի-
ութիւններս՝ այն ինչ տղուն զուարճալի
ծաղրածուն մը փակցունելով, զայն ըն-
թացիկ ընելով չափ յամառ գործածու-
թեամբ. ասոնց ամէնքը իր միամիտ
խառնակութեամբը՝ յիշատակի լուրթ
աւաղան մըն է հիմայ՝ ուր առօրին հո-
գերէ խոնջ միտքս կը տարուի լոգնալ եւ
հոգիս ալ կը վերապրի ծփանքովն այդ
առաջին կեանքիս, այդ կեանքս՝ գե-
րազանցապէս գողտր ու կաթողին։
Հոն էր, ճաճանչումներու այդ յորդ ցան-
ցին մէջ էր ուր յաւէտ թօթափեցինք մեր
թերուսի մշտն խարխափանքն ու վարա-
նոտ տարհամոզումները։ Ինչ որ չի կար,
ու ինչ որ պէտք էր ըլլալ գանկերնուս
ունային մէջ՝ չըտեսի թափով մը կը
չանայինք ամբարել սերտողութիւններու
այն լուռ ժամերուն ուր չշուկը կը լըս-
ուէր միայն թուղթին վրայ պտըտող գը-
րիչներուն կամ գիրքի հեւ ի հեւ թըղ-
թատումներուն։

Համակ աւանջ կտրած կ'ըլլայինք ու
պատկառօտ լրջութիւն մը կ'անշարժէր
մեր նստուածքը էֆէնտին դասերուն։
Պէրպէրեան մականունը իրը չէր, հապա
դպրոցինը, եւ «էֆէնտին» զոր կուտա-
յինք իրեն՝ տիտղոս ըլլալէ առաջ իր ա-
նունն էր մեզի համար։

Շուրջ ծանր էր։ Այս երեք բառերը
բաւ են բովանդակութիւնն ըլլալու նկա-
րագրին այդ մեծ մարդուն որ առանց
աղմուկի, առանց ռեֆլաքի, քառորդ
դարէ ի վեր պերեւելանին մրտնջող
վրայ պատանիներու ստուար թիւ մը իր
յարկը խմբած՝ ջամբած է ու կը շարու-
նակէ ջամբել անոր բարոյականի եւ ու-
սումներու լոյս պաշարը։ Անանկ որ ա-
շակերտութիւն չէր մերը, այլ սուղ ա-
տենի մը համար ըղձալի որդեգրութիւն
մը՝ որուն մէջ կը բերուէինք մոռնալ
պահ մը իրական ծնողքնիս։

Անգամ մը շարագրութեան նիւթ ու-
նէինք Արուեստահանդէս այցելողի մը
հիացումները նամակի ձեւին տակ։ Բարձ-
րագոյն թիւէն զատ խաչ մըն ալ կցած
էր էֆէնտին իմ գրածիս։ Պանքնօթ մը
մէկ րոպէի մէջ վաստակող չքաւոր մը
ինչ նուազ պիտի հրճուէր ապահովա-
պէս։ Պահած եմ այդ շարագրութիւնս՝
որուն ճակատը չքանչանի մը պէս կը
պսպղայ 6*ը։ Այսօր տեսակ մը բարի
արգահատանքով միայն կրնամ նայիլ այդ
ողորմուկ գրածիս որուն մէջ համբակ
թուիչի մը առաջին խղուրդախնը կայ...

Երանելի՛ օրեր, կարծես դեռ հերոս
էր որ ապրեցայ ձեզ, ա՛յնքան անեղծ
պահած է սիրտս ձերին տաքը։

Աչքիս առջեւն է ինք, դասարաննուս
պատուանդանին վրայ արձանացած,
մինչ «ոգի ի բռին» (ան ատեն ո՛րչափ
գգիւն ծայրը յաճախող ոճս) կը ճգնէր
կակղել բունծը՝ միտքերնուս կորդ դաշ-
տին ու լայնցնել հորիզոնները մեր մըր-
գուղ երեւակայութեան։ Մատենագրու-
թեան դասին, երբ Խորենացին կը լուծ-
ուէր կամ Դաւիթ Անյաղթը, դարերու
մամուռին տակ փխրուն այդ մեծ դէմ-
քերուն մէջէն կ'երեւակայէինք առջեւ-
նիս ունենալ նոր Պրոյերես մը, դիւթ-
ուած անոր պերճ խօսուածքէն, ձայնին
բիւրեղ թրթռումներէն դիւթուած
ա՛յնքան որ՝ հիացումէ ա՛լ չլմոր՝ չէինք
քաշուեր զինքը որոտընդօստ ծափողջու-
նելու։

Այդ դասերը կամաց կամաց մեռ-
ցուցին մեր ներսէն յաւակնոտի ամէն
խրտում, ինչու որ օրէ օր կ'ղգայինք
թէ մենք կայլակ մըն էինք տակաւին
հմտութիւններու այդ դարալիր գաւա-
թին քով։ Սորվեցանք թէ ի՛նչ եթե-
րային վայելք կար դաղափարի մը քո՛ւ
կողմէդ թխսումին մէջ ու ի՛նչ հեշ-
տանք՝ երբ կարենայիր զայն կո՛կ հազ-
ուեցնել, թէ խոտի կէսնքէն յետոյ ծա-

ուի կեանքն ալ կար, ստուերոտ, պըտ-
ղաբեր, տիտան ու անա'նց կեանքը՝
մարդ էակին համար, եւ թէ Առաքի-
նութիւն կոչուած վհուկ բառը ձախու-
ղանքներու կուրծք տալուն մէջ կը կա-
յանար մանաւանդ:

Այսօր եթէ, * * *
նենրիդ մեր կռնակին փակելէ յետոյ
նետուած ենք կեանքի պայքարոտ կըր-
կէսին մէջ եւ առանց շողմանքի, ա-
ռա'նց անգութ սպասումներու եւ ստո'ր
դարպասումներու կըր'անք կոր մեր պա-
տառը ծամել, չէ՞ անոր համար որ դի-
տութեանց եւ լեզուի դասերէն զատ
տողորուած ենք նաեւ հրայրքովն այն
առողջ, այն լմա'ն դաստիարակութեան
զոր դուք, գաղափարի մա'րդ, ներ-
շնչեցիք մեզի:

Նորերէն չեւա'ն վիժածներ որոնք չի
խպնեցան կապիկի շորիկ ընդ-վզումներ
ընելու Ձերբիւրեղ անունին ու համբաւի'ն
ալ դէմ: Թիթեռնիկին յաւիտենի պար-
ծենկոտութիւնն էր ատիկա, «Ձմայլե-
ցէք սպիտակ թեւերուս վրայ»: Շուշանը
կայ ու պիտի մնայ միշտ, «Մոռցա՞ր որ
դեռ երէկ աննշան միջատ՝ աիդմին մէջը
կը սողայիր» պատասխանելու պատ-
րաստ...:


Ինչ որ առինք ձեզմէ իբր էն հսկայ,
է'ն անմոռանալի դասը, ան ալ ձեր
կեանքն է, ձեր երիտասարդութեան
կեանքը: Դուք, համեստ ընտանիքի զա-
ւակ, զրկանքի օրերնէդ ինքնօգնու-

թեամբ հասնելէ վերջ այսօրուան փառ-
քերնուդ այդ բարձունքին՝ ուր տքնու-
թիւններնուդ քրտինքները մէկիկ մէկիկ
վերածուեցան ադամանդի պուտերու,
դուք չը չիկնեցա՞ք երբեք խոնարհ ծը-
նունդնուդ վրայ:

Համարներնուդ գունագեղ հմայքէն
նշանախեց մը չի խախտեցա՞ւ ուղեղէս,
ու յայտարար պահած ունիմ զՁեզ սենեա-
կիս պատին վրայ, է'ն վերը բոլոր այն
լուսանկարներուն մէջ որոնք աշխարհիկ
երկսեռ մարդերու բոյլ մըն են: Ատոնց
մէջէն Ձեր աչքերը կը փնտռեմ միշտ,
կողմնակիօրէն ինծի նայող, զիս նորէն
աշխատութեան հրաւիրող ու լռեւեայն:
պատմող մեծութիւնը համա'կ վեհագի
եւ զգօն կեանքի մը: Լայնչի ճակատ-
նիդ՝ որուն վրայ սխալ քայլ առնողի մը
զոյժումին ակօսը չէ փորուած դեռ՝ կեն-
դանի օրինակը կը պատկերացունէ ինծի
անյողգողդ եւ վայելչօրէն խորխտ անձի
մը, որուն մտատիպարը եղած է ապրիլ
եւ ապրեցնել նոր սերունդը բարոյական
աշխարհի այն երբեակ չքեղ բաղհիւս-
քով որ կը կոչուի Գեղեցիկ, Բարի ու
Ճշմարիտ...:

Թոյլ տուէ՛ք ուրեմն, մեծ Վարպետ,
որ զՁեզ առտու իրիկուն արբչիւ դի-
տելէս յետոյ՝ պահ մը հանեմ չինական
փախթէ պատկերակալնէդ, փոխադրե-
լու ՀԱՆՐԱՊԵՏԱԿի այտին վրայ, իբր
նշան խորին պաշտելութեան:

ԹԷՌԴԻԿ ԼԱՊՅԻՆՃՆԱՆ



կառելի հանդիսացաւ: Պազոններ, Տէգարդներ, Լայանիցներ, Քանդեր բարձրացուցին զայն իր անկեալ վիճակէն եւ նախնի արժանեաց աստիճանին հասցուցին: Այսու ամենայնիւ վերջին ժամանակներս ալ եղան ազատ խորհողներ, թեթեւադատ, թերահաւատ կամ անհաւատ մտածողներ, որք «փիլիսոփայ» անունով ճշմարիտ փիլիսոփայութեան անարժան ընթացք բռնեցին եւ անոր անուան արատ ու բիծ դրին:

* * *

Փիլիսոփայութիւնը կամ ԻՄԱՍՏԱՍՈՒՐՈՒԹԻՒՆԸ, ինչպէս ըսինք, գիտութեանց եւ ուսմանց սէրը ըսել է, որ նոյնպէս կը ծագի յոյն սօփիա (իմաստութիւն) եւ Ֆիլոս (բարեկամ) բառերէն: Այս բառը շատ տարբեր ու զանազան առումներ ունի:

Ա. Ի սկզբան եւ շատ երկար ատեն, Փիլիսոփայութիւնը տիեզերական գիտութիւնն հանդիսացաւ: Այս իմաստով է որ կրկերոն՝ Պղատոնի համաձայն՝ կը սահմանէ զայն «Աստուածային ու մարդկային իրաց, նոյնպէս եւ անոնց պատճառներուն գիտութիւնը»: Սքօլաստիկները (դպրոցականները որք միջին դարու տեսակ մը սփեւս կոչուած իմաստակ փիլիսոփաներն են) զայն կը սահմանեն՝ ըստ Արիստոտէլի՝ երբեմն «Գիտութիւն սկզբանց», երբեմն «Գիտութիւն պատճառաց հանդերձ իրենց արդեամբք» եւ «գիտութիւն արդեանց հանդերձ պատճառօք» կամ աւելի կարճօրէն «Պատճառաց գիտութիւն»:

Վերջապէս Պազոն ալ նոյն իմաստով փիլիսոփայութիւն եւ գիտութիւն բառերը կը նոյնացնէ, եւ մարդկային ծանօթութիւնները դասակարգած ատեն՝ Փիլիսոփայութիւնը բառը Պատճառեան եւ Արուեստից հակառակը կը դնէ: Հիները, այս ըմբռնմանց համեմատ, փիլիսոփայութիւնը կը բաժնէին երեք մեծ մասերու. 1. Բնագիտութիւն (Ֆիզիկ) կամ Բնութեան գիտութիւնը. 2. Տրամաբանութիւն կամ վիճաբանականը (Տիալիքսիք). 3. Բարոյականը կամ Բարոյագիտութիւնը: Սքօլաստիկները հինգ մասերու կը բաժնէին զայն. 1. Տրամաբանութիւն. 2.

Բնագանցութիւն (Մէթաֆիզիք). 3. Բարոյագիտութիւն. 4. Բնագիտութիւն եւ 5. Չափագիտութիւն (Մաթէմատիք):

Բ. — Դարուս վերջերը, փիլիսոփայութեան ընդարձակ սահմանն անձկացաւ. այս անուամբ մասնաւորապէս կոչեցին մասնաւոր գիտութիւն մը, որ աւելի անձուկ կերպով կը ճառէ իմաստութեան վրայ, գիտութիւն մը՝ որոյ նիւթն են աննիւթ էակները (Հոգի եւ Աստուած) եւ կ'աւանդէ այն կանոնները՝ որք այս աննիւթ էակաց (Հոգւոյ եւ Աստուծոյ) ծանօթութեանց հիմնութեան վրէպտելին կամ կը բղխին, մարդս անոնցմով իր մտածմանց ու գործողը մէջ առաջնորդելու համար: Փիլիսոփայութիւնն իր այս երկրորդ առումին մէջ կը բովանդակէր հին փիլիսոփայութեան երեք մասերը միայն, Տրամաբանութիւնը, Բնագանցութիւնը եւ Բարոյականը: Սկոփտական իմաստասէրք կը կոչեն զայն մարդկային մտքին փիլիսոփայութիւնը: Այսպէս հասկցուած փիլիսոփայութիւնն է որ Դասական իմաստասիրութիւնը կը կոչուի, որոյ մասին ի ստորեւ պիտի խօսինք:

Գ. — Փիլիսոփայութիւնը կը կոչուի նաեւ երբեմն ամբողջութիւնն առաջին ճշմարտութեանց, հիմնական սկզբանց, որոնց վրայ հաստատուած է գիտութիւն մը, արուեստ մը, Երբեմն ալ այս բարձրագոյն սկզբանց խուզարկումը, ուսումնասիրումը կ'ըսուի Փիլիսոփայութիւն: Եւ ասոր համար է որ կ'ըսեն Բնագիտութեան Փիլիսոփայութիւն, Մաթէմատիքի Փիլիսոփայութիւն, Պատմութեան Փիլիսոփայութիւն, Իրաւանց կամ Իրաւագիտութեան Փիլիսոփայութիւն, կամ ընդհանրապէս Գիտութեանց Փիլիսոփայութիւն: Այս առաջին ճշմարտութիւնները հետազօտելու, ամէն ինչ քննութեան ենթարկելու, ամէն բանի խորը թափանցելու, անոնց ամենքն ալ հիմնապէս հասկնալու ձկտումը կը կոչուի ու կը լինի փիլիսոփայական հոգին կամ իմաստասիրական միտք: Իմաստասիրական այս քննութիւնն եթէ չափազանց ծայրայեղութեամբ եւ ապօրէն կերպով յառաջ տարուի, կրնայ սկեպտիկանութիւն ու թերեհաւատութիւն յառաջ բե-

ւել, ինչպէս պատահեցաւ վերջին դարու մէջ: Փիլիսոփայութիւնը կոչուեցան կարգ մը անկրօն, անհաւատ հրատարակութիւններ: Այսպիսեաց կարգէն է, իր նմանեաց շատերուն մէջ, Վոլթէրի բազմահատոր Փիլիսոփայական բառարանը: Մեր մէջ ալ այս անսակէն է Իմաստասիրական շարժումն Ազատականի մը, զոր անմահն Օտեան իր վսեմ գրչով հրապարակաւ սաստեց, գոչելով առ Ազատախոհէան. «Ամբարի՛շտ առաջի Աստուծոյ և առաջի մարդկան»: Այս կարգի ազատախոհէան մտածողներն ընդհանրապէս կը ծաղրեն ու կ'ուրանան եկեղեցւոյ Ս. Խորհուրդները, իմաստասիրական ամբարիշտ բացատրութեամբ կը գայթակղեցնեն բարեպաշտութեան, կրօնի, հաւատոյ վրայ հիմնեալ եւ ազգաց ու ժողովրդոց գոյութիւնը, հոգին, ոյժը վարող, կազմող երկիւղած իմաստասիրութիւնը:

Այսպէս հասկցուած փիլիսոփայութեան համար գրած է Բորդալի (1745—1807) — ֆրանսական կայսրութեան օրով Քաղաքային Օրինագրքի խմբագիրներէն մին և նոյն ատենի կրօնից նախարար ու նշանաւոր իրաւագէտ, — իր այն նշանաւոր հեղինակութիւնն որոյ վերնագիրն է «18^{րդ} Դարուն մէջ փիլիսոփայական մտքին ու հոգւոյն գործածութեան ու զեղծումներուն կամ զառանցանքին առթիւ»:

Փիլիսոփայամոլութիւնը կամ գեղծեալ իմաստասիրութիւնը (philosophisme) անունը տրուեցաւ իմաստասիրական ոգւոյն զեղծ ու չարաչար գործածութեան: Այս իմաստով է որ Թապարօ յորջորջած է իր գործերէն մին «Պատմութիւն անգլ. իմաստասիրամոլութեան»:

Դ. — Ուրիշ բարոյական առումով մ'ալ փիլիսոփայութիւնը կը կոչուի հոգւոյն այն կորովի հաստատամտութիւնն ու բարոյական կտրճութիւնը որ զմարդ ռամկին, գոհեցնելն կ'իրքերէն ու կարծիքներէն դեր ի վեր կը բարձրացնէ, որ կուտայ նմա արհամարհել աշխարհի սին ու ոսին փառքերը, պատիւները, փարթամութիւնները, նախապաշարումները: Այս իմաստասիրական սինընկճելի ոգւով զօրացած մարդ մը իր ժամա-

նակակիցներուն վտիտ ու ազազուն մախանքը, յաշաղանքը եւ իրեն դէմ լուտացուած ամէն լպրչանքներն առաթուրկը կ'ոխէ: Ահա այս գործնական փիլիսոփայութեան շնորհիւ ա՛յնքան փայլեցան Սոկրատ, Ստոյիկեանք, Եպիկտէր: Այս գործնական իմաստասիրութեան կը պատկերէ Հին Հռոմ իր անպարտելի կեսարները, հանրապետական Դիկտատորները, խորհրդարանական Հռետորները, Հին Լակեդոմոնացւոց եւ հին Աթենացւոց մեծ ու արի մարդիկ եւ սնած էին այս իմաստասիրութեան ոգւով, որուն կը պարտին նաեւ մեր աշխարհական թէ կրօնական մեծանուն ու կորովարարոյ Հարք և նախնիք՝ ծայրայեղ տառապանաց ու աշխատութեանց մէջ՝ իրենց տոկունութիւնն ու երկայնատեւութիւնը, եւ որուն մենք եւս այսօր առաւել քան երբեք պէտք ունինք:

Միեւնոյն ժամին այս չորս իմաստները, հակառակ իրենց առերեւոյթ տարբերութեան, իրենց մէջ ունին անձուկ կապակցութիւն, մերձաւոր առնչութիւններ: Դիւրին է նշմարել թէ անոնք ամենքն ալ կը ծագին իմաստութեան կամ գիտութեան գաղափարէն, որուն յաւիտենական կտակարանն ու աւետարանն է Փիլիսոփայութիւնը:

(Շար.)

Ա. Լ.



դուրս կախուելով սկսաւ անշարժ իրեն նայիլ...: Հոն անշարժ մնաց Վահէ ալ. զգաց թէ ճանչցաւ զինքը: Ու իր ծայր շփոթութեան, յուզումի այդ վայրկեաններուն ուր սիրտը կուրծքը պայթեցնել կ'սպառնար եւ ուր ծունգերը կը կթոտէին, Վահէ զգաց իրապէս գերասուրբ հրճուանքի մը ու գերագոյն երանութեան մը անստգիւտ խռովքը:

Այդ գիշերը ունեցաւ Վահէ իր է՛ն մեծ ներշնչումը ու գրեց իր գլուխ-գործոցը, — սօնաթ մը զոր չի պիտի ամչնար «Ֆիմի» կոչելուն:

Հիմա այս բաները յիշած պահուն, Վահէ կրելով այդ օրերուն մէջ վերապրելու պատրանքը, իր տառապած դէմքը առած էր ուրախ արտայայտութիւն մը:

Սակայն ցնցում մ'ունեցաւ, սարսուռ մը յանկարծ. սեւ ամպ մը եկաւ խափանել ճառագայթը՝ որ այս մտածումներուն արշալոյսը իր դէմքին վրայ բացած էր, մթնցաւ այդ դէմքը նորէն, ինչպէս այս տողերուն սկիզբը, եւ առաւ անգուրծ վհատութեան մը արտայայտութիւնը:

Որովհետեւ իր մտածումներուն կարգաւ կրեց տպաւորութիւնը այն վայրկեանին ալ ուր այդ գիշերուան յաջորդ օրը սօնաթը աւարտած՝ զայն դաշնակին վրայ ալ նուագելու ատեն ստացած էր այն տոմսակը զոր, ինչպէս տեսանք, Լուսեա գրեց Ֆիմիի այցետոմսին վրայ:

Շանթահարող էր պարզապէս այն տպաւորութիւնը զոր այդ աղետալի անակնկալը պատճառած էր իրեն. Սօնաթը որուն նօթերը այնքա՛ն երանութեամբ, խոստումներով, ապագայի նոր հեռապատկերներով լեցուն՝ կը թնդար ըրպէ մը առաջ, ցաւոտ ողբի մը սրտաճմլիկ արձագանքներով կը հնչէր ըրպէ մը ետք իր հոգիին աղջամուղջներուն մէջ:

Այն օրը, ու գիշերը մինչեւ լոյս սրտաբեկումի ու մտալկումի՝ դարեր տեւող ժամեր տաքնապեցաւ Վահէ: Այդ

տաքնապներուն մէջ սակայն կասկած մը ծագեցաւ մտքին մէջ: Արդեօք չարախօսա՞ծ էր մէկը իրեն մասին. է՛ն բիւթէեւ, բայց է՛ն սովորական զգացումը չէ՞ այս մարդ կոչուած կենդանիներէն մեծ մասին. ու չէ՞ մի որ ենթական է՛ն արգահատելի տրամադրութիւնը, տկարութիւնը ունի համոզուելու ամենէ՛ն վստահելի անձի մը համար իսկ եղած ամբաստանութեան:

Այս գաղափարէն կաղզուրուած՝ նորէն Վահէ գնաց վազելով, ու շնչասպառ հասաւ այն վայրը որ իր սրտին ու մտքին տաճարն էր եղած ատենէ մի վեր ու գողի մը պէս պահուրտած՝ աչքերը սեւեռեց այն պատուհանին որ իր հոգիին խորանն էր ըրած, ուր Սուրբ մը տեսնալ սովորած էր:

Սարսա՛փ, ամայի էր պատուհանը:

Իր յուսահատութեան մէջ յաջորդ գիշերները նորէն գնաց Վահէ. Առջի օրուան անձրեւէն ետք կաղզոյր եւ բանաստեղծութիւն բուրոյղ այդ ժամերուն մէջ ալ չը գտաւ Ֆիմիի պատուհանին առաւջը:

Ժամեր կան, ամիսո՞ւ, ուր մարդ կը կարծէ ապրիլ իր է՛ն գեղեցիկ կեանքը. բայց կուգայ կը հասնի այն օրն ալ ուր կը հասկնայ թէ է՛ն աղետալի ժամերն են եղեր ատոնք:

Այսպէս Վահէ վճռեց թէ այն գիշերը զինքը նշմարած պահուն իր խանդավառ շարժումը պարզապէս զինքը հոնկէ վռնտելու սպառնալիք մըն էր...

Աղէտք մը եղաւ այս բանը Վահէին համար: Իր ապագայի նոր հեռապատկերը, իր նոր յոյսերը, յուզումները, քաղցրութիւնները, վայելքները ամբողջն ալ իր շուրջը, իր մէջը, իր վրան փլչիլ սկսան ձեւացուելով ամենուրեք սպանիական դղեակներու մոխրակոյտ մը:

Չարգացում, եռանդ, աշխատութիւն, անուն, փառք, ա՛լ ամէնքն ալ իրեն համար վերջացած էին... Թողով իր

դէմը տեսիլքի մը զգայութիւնը , ասուպի մը հետքը...

.

Ալ այն ատեն լքեց Վահէ վիլլաին ճամբաները :

Ամիսներ անցան :

Այդ օրերուն մէջ վերջերս մեռաւ իր հայրն ալ . դժբաղդութիւնը առանձին չի գար :

Պէտք էր սակայն ապրիլ՝ ինչպէս կ'ըսեն :

Քանի մը յիշատակ թանկագին առարկաները զորս մայրը պահած էր նշխարքի մը պէս՝ ծախեց : Ծախեց նաև տանը արժէքաւոր կարասիները :

Բան մը չէր մնացած ալ :

— Ի՞նչ ընելու է հիմա , գաւակս . աս ի՞նչ դժբաղդութիւն էր որ եկաւ մեր գլխուն... :

— Մի՛ ատանկ յուսահատիր , մայր , Աստուած ողորմած է... :

Ու կլլելով հեծկտուքը որ պայթիլ կ'ուզէր .

— Մայրի՛կս , դաշնակը , դաշնակը կը ծախենք :

Սիրտը ելած այս խօսքէն , ձեռքերուն մէջ առաւ գլուխը իր նիհար Վահէին ու սկսաւ համբուրել անոր դալուկ այտերը .

— Զէ՛ , գաւակս , չէ՛ , չեմ թողուր ես որ ծախես դաշնակդ . չի պիտի բաժնուիս դուն դաշնակէդ . ան քու հոգիդ է . չէ՛ , ես տակաւին քու մայրդ եմ . քեզի թշուառացունե՛լ , կարելի՞ բան է ադ , իմ սիրական տղաս . նայէ՛ դեռ շատ պառաւ չեմ ես , դեռ կարողութիւն ունիմ աշխատելու... :

Օ՛հ , այս ցաւոտ խօսքերը իր բարի , իր քաղցր մայրիկին... :

Իր մայրի՛կը , չէ՛ , պէտք չէր որ իր մայրը աշխատէր րարս փաստիկելու համար , հաց ճարելու համար .

առաջնորդած , թէ տակաւին զարգանալը կարելի է եղեր իրեն համար , թէ օր մը երբ Եւրոպա ելթար... :

Այն ատեն Վահէ վերածնած , վերակենդանացած իր օրօրհասէն՝ սկսաւ իրմէն վանել այն զգուսնքը որ իր մէջը գոյացած էր վերջերս կեանքի նկատմամբ : Օրհնեց երկիւղածօրէն իր ճակատագիրը . այն ճակատագիրը զոր անիրաւ տեղը անիծած էր : Սկսաւ սիրել կեանքը , ու անյագ բաղձանք մը ունեցաւ ապրելու , շա՛տ ապրելու :

Մազնիսաձիգ զօրութիւն մը ա՛լ ամէն գիշեր անտառին մէջ քաշեց տարաւ զինքը : Վահէ ծառերուն ետեւ պահուրտած՝ Ֆիմիին մտածկոտութիւնը շնչելու գերագոյն վայելքը ունեցաւ հոն միշտ : Այս նուիրական վայելքին մէջ հետզհետէ հալեցան իր անցեալ բոլոր դառնութիւնները , ինչպէս սառը կը հալի կրակին մէջ . Այս օրերուն մէջ Վահէ խենդի պէս փարեցաւ երաժշտութեան , անխոնջ , խօլեռանդ աշխատող մը եղաւ . նոր նոր յոյսեր ու երազներ շինեց իրեն ու սկսաւ պաշտել իր դաշնակը զոր լքելու կը պատրաստուէր : Այո՛ , պէտք էր որ սիրէր երաժշտութիւնը . անո՛վ Ֆիմին ճանչցած էր : Պէտք էր որ աշխատէր , աշխատութեամբ պիտի կրնար օր մը անուն մը շինել զոր Ֆիմի պիտի արտասանէր : Պէտք էր որ զարգանար , այո՛ , պէտք էր որ , ա՛խ , զարգանար . զարգացմամբ միայն պիտի կրնար երաժշտութեան նօթերով ճշտօրէն , գեղեցկօրէն թարգմանել այն ահաւոր զգացումները , անբացատրելի չեա գիտեր ինչերը որոնք կ'եռային իր մէջը Ֆիմիի պատկերին , անունին իսկ մտածումովը :

... Գիշեր մըն ալ , մութ , անասող գիշեր մը Վահէ չի կրնալով զսպել այն պողպատ ոյժը որ զինքը վիլլաին աւելի մօտիկ կը մղէր , քալեց , գնաց այնքան մօտիկ անոր պատուհանին ուրիշ կրնար իմանալ անոր շնչառութիւնը , Ֆիմի նշմարեց զինքն առաջին անգամ ըլլալով , չարժու՛մ ունեցաւ յանկարծ , խանդավառ շարժում մը ու պատուհանէն

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

այս նոյն սենեակը մտնալով, իր կեանքին մէջ է՛ն անյուսալի փոխակերպութիւնը մտցուցած էր :

Ու արագ արագ Վահէին մտքին առջեւէն կ'անցնին իր ունեցած բոլոր վիճակները ադ տարիուկէսուան մէջ :

Ինք՝ որ զգուանք ու արհամարհանք ունէր ճկին՝ արարածին համար, Տիրանին մեկնած օրուան իսկ գիշերը մարմաջուած՝ փիմին գէթ ստուերը տեսնալու հոգիին անմերժելի պէտքէն, գացած էր անտառակին մէջ, վիլլաին դէմը : Օ՛հ, ի՞նչ անգին յուզումներ ունեցած էր հոն, երբ ծառերուն ճիւղերուն մէջէն տեսած էր փիմին պատուհանին առաջը նստած երազուն դիրքի մը մէջ : Գիշերուան այդ ժամուն մինա՛կը, մութ սենեակին մէջ, պատուհանին առաջը : Վահէին հոգին ալեկոծուած էր այս տեսարանէն : Մտածումներ էին խուժած իր մէջը, ենթադրութիւններ մարմին առած, որոնց՝ իրեն պարգեւած երանելի վրդովէն ահաբեկած էր : Ու մարելու համար այն յանդուգն բաղձանքը— « փիմի »...» գոչելու բաղձանքը — որ իր լանջքին խորը բոց էր առած այդ պահուն, և զոր իր շրթունքները մեղմիկ կ'արտասանէին, հարկ էր եղած է՛ն վիթխարի ճիւղերն ընել :

Իր այս յուզումները, իր այս հրճուագին տառապանքները իրենց եզական, հզօր բարձրութեան մէջ ներկայացան, երբ մանաւանդ ինքզինքը ներշնչուած գտաւ հետեւեալ օրը, դռնը բացելու զգաց եւ կարողացաւ իր տենդոտ տպաւորութիւնները արտայայտել : Երկու ցօքիւն գրեց յաջորդ օրը :

Վահէ խանդավառուեցաւ :

Ուրեմն իր եռանդը ու ներշնչումը չէին ոչնչացած, դեռ պիտի կրնար ուրեմն աշխատիլ, տակաւին տաղանդ ունի եղեր ուրեմն, ուրեմն իր ենթադրութիւնները բոլոր սխալ են եղեր, թէ երաժշտութիւնը զինքը պատրանքներու չէր

— Չէ՛, չէ՛, չի պիտի թողում, կը մրմնջէր ինքնիրեն, չի պիտի թողում... »

Այս տպաւորութեամբ լեցուած, Վահէ գացած գտած էր այն բարեկամը որ շատ անգամ սա խօսքը կրկնած էր իրեն :

— Ձգէ՛, բարեկամ, սա դաշնակը. հոս ստակ չընէր միւզիքը. որո՞ւ համար պիտի ուզես յառաջ տանիլ արուեստը...

Խեղճ տգէտ արարածներ ահա որ չե՛ն գիտեր, չի պիտի կրնան ալ երբեք գիտնալ թէ գեղարուեստը սիրող էակը է՛ն առաջ ինքզինքին համար անոր կը նուիրուի, վիթխարի պէտքէ մը մղուած անոր կը փարի : Սրբապղծութիւն է այն՝ երբ մէկը գեղարուեստի կ'աշխատի շահադիտական նպատակաւ մը : Արուեստը արուեստին համար. ահա մտապատկերը ճշմարիտ արուեստագէտին :

Այո՛, Վահէ, սակայն, գացած գտած էր այդ բարեկամը որ ուրիշ օր մըն ալ սապէս խօսքեր էր ըրած իրեն :

— Բարեկա՛մս, դուն տղայ չես. խօսքս մոի՛կ ըրէ՛. մէյ մը շուրջդ նայէ. հայրդ ծերացած է ալ. Աստուած չընէ եթէ վաղը մէկալնօր մեռնի՛ ի՞նչ պիտի ընես, ի՞նչ պիտի ըլլայ մայրդ. խեղճ պիտի ըլլաք, վաղ անցիր սա դաշնակէ՛դ ալ, նօթա գրելներէդ ալ. նայէ՛, տկարացեր ես. երեսդ գոյն չէ մնացեր... » :

Յետոյ շարունակած էր փրկիսփայաբար :

— Տղա՛ս, ատոնք փոր չեն կշտացուններ. հիմա դուն խելահաս ես, գիտնալու ես ասոնք. քալէ քեզի աղէկ գործ մը գտնամ. ապագայ չինէ, աշխատութեանդ արդիւնքը պիտի առնես. ես քեզի ինչ որ կ'ըսեմ կոր դուն անոր նայէ, սանկ մէյ մը բարային համը առ... »

Եթէ մարդկային ընկերութեան մէջ կայ հոգի մը, նկարագիր մը, լեզու մը մէկ բառով զոր շատ քիչ մարդիկ միայն պիտի հասկընան, ան ալ աւելիսդ ինչ է զոր չի սովորուի աշխարհի կ'ունեցուի :

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

1419

Ուրեմն ի՞նչ պատասխանէր Վահէ այս մարդուն երբ բան մը չի պիտի կրնար հասկնալ ան : Ու ներքին գայթակղութենէն համբերութիւնը հատած Վահէ խօսքը անոր բերանը ձգելով քովէն հեռացած էր առանց մնաս բարովի մը :

Հիմա սակայն ի՞նչ նուաստութիւն անդրադառնալ թէ անոր , այդ թշուառականին «բարեկամութեան»ը դիմած էր , անոր օգնութեան կարօտցած էր , որպէս զի իրեն գործ մը գտնար . ի՞նչ նուաստութիւն , այո՛ , հիմա որ կ'զգար թէ եթէ հարկ ըլլար անոր պիտի թախանձէ՛ր ալ...

— Ես քեզի չըսի՞ , սկսաւ խօսիլ ան երբ տեղեկացաւ Վահէի՛ իրեն դիմելուն շարժառիթին , հէ՛ , ես քեզի չէի՞ ըսեր , սիրտս չէի՞ հասցուներ , եղբօր պէս չէի՞ խրատեր քեզի : Խելքդ նո՛ր գլուխդ եկաւ , հա՞ , նայինք մինչև այսօր ի՞նչ տեսար սա միւլզիք ըսածիդ երեսէն , ի՞նչ տեսար դժբաղդութենէ զատ...

Ուրիշ ատեն մը Վահէ ապտակներ պիտի տեղար իրեն այս կերպով խօսողի մը երեսին . հիմա սակայն ցամքած էր իր աւիւնը , իր նախկին հուրը , իր զայրացկոտութիւնը . ա՛լ չունէր , կ'զգա՛ր թէ չունէ՛ր ալ իր աղատութիւնը , անկեղծութիւնը , բարկանալու ուժը :

Ու յանցաւորի մը պէս գլուխը կախած կը թողուր որ խօսէր ան այս միեւնոյն լեզուովը , կը թողուր որ յանդիմանէր , անարգէր զինքը : Թո՛ղ ծեծէ՛ր ալ զինքը , չի պիտի կրնար բնաւ դիմադրութիւն մ'ընել :

Իր մա՛յրը պիտի փրկէր :

Ի՞նչ վիշտ , ի՞նչ տրտմութիւն սակայն Վահէին այս գառնուկի հեզութեան , այս համակերպութեանը մէջ զոր ան կը շահագործէր :

— Քալէ՛ , քալէ՛ նայինք , ըսաւ վերջապէս :

Առաւ տարաւ զինքը վաճառանոց մը ուր , շնորհիւ իր ազդեցութեան , պաշտօն մը ճարեց Վահէին , քանի մը շրջապատականով :



Է

ՈՒԹ-ԿԱՊՈՅՏ շերտգոյրները գոց են ա-
մէնքն ալ : Դուրսը կը սուլէ հովը , աշունը
կը հեծէ :

Գորշամած սենեակին մէկ անկիւնը իր հին-
ցած թիկնաթոռին խորը թաղուած գրադարա-
նին առաջը , գլուխը ձեռքերուն մէջ , ու մատերը
խռուացած մազերուն մէջ մխրճած , մրկալից՝ գիրքի մը
աշխարհին մէջ է տարուած Վահէ :

Ժամերէ ի վեր անյագօրէն կը կարդայ այդ գիրքը : Հի-
մա ա՛լ վերջին էջն է հասած : Դէմքն ահաւոր տօգունու-
թիւն մ'ունի :

Յանկարծ դիմադները կ'ստանան տխուր երանութեան մը
մռայլ ցուքը , կուրծքէն հեկեկանքի պէս հառաչ մը կը բար-
ձրանայ : Աւարտած է : Ու հիացումով շրթներուն տանելով
այդ գիրքը՝ ջերմ համբոյր մը կը դնէ հոն :

Վերթէրն է այդ :

Վերջալոյսի արեւը , անարեւ օրէ մը ետք , ամպի մը
պատռուածքէն արձակած հրդեհ ճառագայթով մը յանկարծ
կը ներկէ այս վայրկենին վարագոյրները ու կը լուսաւորէ
անշուք ու տօգոյն սենեակը Վահէին :

Կարօտաբաղձութեան նմանող զգացում մը այս արեւին
երեւոյթը կը ծնի Վահէի սրտին մէջ : Ասանկ վարդ արեւ մը
կար այն իրիկունն ալ , տարի ու կէս առաջ , ու ինք հիմակ-
ուանին մօտ վիճակ մը ունէր , երբ իր մտերիմ Տիրանը

ՀԱՆՆԻՐԱԳԻՏԱԿ

1426

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ս.

3. Զգայարաններու դաստիարակութիւնը

(Շարունակութիւն ժԸ քիւէ6)

Զգայարաններուն դաստիարակութիւնը շատ կարեւոր է: Հոս հոգւոյն ու մարմնոյն միջեւ աղերս մը կայ, — ֆիզիքական դաստիարակութեանն անցում իմացական դաստիարակութեան: Դաստիարակութեան գործին այս մասը սովորաբար կարծուած է շատ աւելի կարեւոր է, և դիւրաւ պիտի ըմբռնենք, եթէ քիչ մը խորհրդածենք անոր վրայ: Արդարեւ մեր գաղափարներուն մեծ մասն ի՞նչ ճամբով կը հասնին մեզ, ա՛յն գաղափարները զորս դուրսէն կ'ընդունինք, — Զգայարաններուն միջոցաւ, ինչպէս ցոյց պիտի տանք ընդհուպ: Եթէ արտաքին առարկաներէ մեր զգայարաններուն ընդունած ու մեզ հաղորդած տպաւորութիւնները տարտամ կամ որոշ, բուն կամ թեթեւ են, եթէ մենք վարժուած ենք անոնց վկայութիւնը թարգմանելու ճշգրիտ կամ սխալ կերպով, պիտի ստանանք տարտամ կամ որոշ, բուն կամ թեթեւ կամ ճշգրիտ գաղափարներ: Եթէ կ'ուզենք (եւ ի՞նչպէս չենք ուզեր) որ մեր աշակերտներուն մտքին ու ծանօթութեանց մէջ ուղղութիւն ու յստակութիւն գոյանան, հարկ անհրաժեշտ է որ անոնց զգայարանները պատշաճապէս մարզենք, և վարժեցնենք զանոնք՝ զգայարաններուն վկայութիւնը դատողութեամբ թարգմանելու կամ մեկնելու:

Գիտենք թէ պիտի առարկուի որ բնութիւնը կ'ստանձնէ այդ հոգը, և թէ օր ըստօրեայ գործնական վարժութիւնը կը մարզէ այս գործարանները, առանց դաստիարակին գործ ձգելու: Արդարեւ բնու-

թիւնը կ'ստանձնէ այդ հոգը, եւ մենք չենք ըսեր թէ դաստիարակութիւնը կրնայ անոր տեղը բռնել, բայց դաստիարակութիւնը կրնայ և պարտի հետեւիլ բնութեան, օգնել և սատարել անոր իր աշխատութեան մէջ, անոր արդիւնքները կատարելագործել, այսինքն՝ զգայարանները մարզել և անոնց զօրութիւնը զարգացնել: Ահա՛ այս կը խնդրուի դաստիարակէն: Աշակերտին կենաց հազարաւոր պարագաներէն պարտի օգուտ քաղել, մեր հոս ցոյց տուած նպատակին հասնելու համար: Հոս խնդիրը կանոնաւոր մարզանքներու վրայ չէ, որ ամէն օր և ամէն ժամ կը ներկայանան որոշեալ կարգաւ մը. այլ, կը կրկնենք, խնդիրն օգուտ քաղելուն վրայ է այն բոլոր յարմար պարագաներէն որք կը ներկայանան դասարանին մէջ, դասի ատեն, զբօսանքի եւ պտոյտներու միջոցին, վարժեցնելու համար ուսանողները լաւագոյնս տեսնելու լսելու, բռնելու և այլն, ա՛յն ուղղութեանց համեմատ զորս կարճ ի կարճոյ պիտի պարզենք աստ եւ զորս դաստիարակին ողջ մտութիւնը պիտի գիտնայ ամբողջացնել կամ բարեփոխել ի հարկին:

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Տեսողութիւնը կամ տեսանելիքը մեր հինգ զգայարաններուն մէջ ամէնէն հրաշալիին է. բայց միեւնոյն ատեն ա՛յն գործարանն է որուն նկատմամբ կրնանք ամէնէն աւելի պատրանք կրել: Կարծես հեռաւոր շօշափելիք մ'է. որոյ միջոցաւ միայն մենք կրնանք հակակշռել և ուղղել այն գնահատումներն ու դատումները զորս կը կազմենք տեսողութիւնը մարզելու առթիւ:

1. Պէտք է տղայքը վարժեցնել մօտաւոր առարկաներու տարածութիւնները (երկայնութիւն, լայնութիւն, բարձրութիւն) գնահատելու, զանոնք բաղդատելու, ինչպէս նաեւ մտքով հաւասար մասերու բաժնելու: Գնահատումները կը ճշտուին մէգրոյով: Մէկ քանի աշակերտներ կրնանք հարցափորձել եւ իւրաքանչիւրին գնահատումները նշանակել, յարաբերական կամ բացարձակ արժանիքն որոշելու համար: Ասիկա լաւ խթան մ'է աշակերտներուն գնահատելու

կարողութիւնը սրելու համար, Միւս կողմէ համանման եղանակ մը կրնայ ի դործ դրուել ամէն մարզանքներու համար ալ, նոյնքան տեսողութեան որքան լսելիքին և շօշափելիքին համար :

2. Ի հարկին կրնանք նմանօրինակ վարժութիւններ ընել տալ գրատախտակի վրայ գծուած տողերու վրայ : Ասկէ զատ, այս գիծերը պիտի գծուին զանազան ուղղութիւններով (խոտորնակ, հորիզոնական, ուղղահայեաց), և ապա աշակերտները պիտի դատեն այս ուղղութիւններն եւ անոնց հակման աստիճանը : Պատշաճ գործիքներով պէտք է ճշտել զանոնք : Միւս կողմէ այս վարժութիւնք, մասնաւորապէս գծագիտութեան (dessin linéaire) դասին մասը կը կազմեն, որոյ վրայ պիտի խօսինք ի ստորեւ :

4. Որ եւ է առարկայ մը նետել որոշուած նպատակի մը՝ աչքին համար լաւ մարզանք մ'է, զոր միւս կողմէ կրնանք աւելի հրապուրել ընծայել, այդ նպատակը տեղափոխելով, պէսպիսիւով : Այսպէս, օրինակի համար, կը դնենք հեռուն խնձոր մը, որ պիտի տրուի այն աշակերտին որ տապալէ զայն : Միեւնոյն նպատակաւ պէտք է քաջալերել կակուղ գնտակին, փետրագունտին եւ այլն խաղերը :

5. Պէտք է վարժեցնել ուսանողները ճանչնալու համանման առարկաներու միջեւ կեցած էական տարբերութիւնները : Այս առարկաները կրնան ըլլալ, օրինակի աղագաւ, զանազան տեսակ փայտեր (կաղնի, չափանակենի, բարտի, ուռի, եղեւին ևլն), զանազան քարեր (սովորական կրաքար, կուճ (մարմար), կայծքար, կարծրաքար (կրանիդ) եւլն, գլխաւոր մետաղները (երկաթ, զինկո, անագ, կապար, արծաթ ևլն) :

6. Տղայոց ուշադրութիւնը պէտք է հրաւիրել հեռապատկերի տպաւորութեանց եւ ուրիշ պատրողական երեւոյթներու վրայ զորս կրնանք ունենալ մեր տեսողութեան նկատմամբ : Այսպէս ծառուղի մը, երկար ճեմավայր մը, եկեղեցւոյ մը խմբարանը իր սիւներով ու կամարով, հորիզոնական դաշտ մը կամ ճամբայ մը որք կարծես հեռուէն կը բարձրանան, կրնան բաղդատութեան եզրներ ըլլալ :


Տղայք պիտի վարժուին այս աչքի պատճառներու իրականութիւնը ճշտելու, բաղդատելով եւ ի հարկին չափելով :

7. Պէտք է ուսանողները վարժեցնել նաեւ գոյներու զանազան աստիճանները (nuance) որոշելու, զանազանելու : Այս վարժութիւնք ենթադրուածէն շատ աւելի կարեւոր են մանաւանդ այն տղայոց համար, որոնց քով տեսողական գործարանին մէկ թերութիւնը յապաղած է տեսողութեան բնական զարգացումը : Ամէնէն սովորական առարկաները կը բաւեն այս բանիս, ինչպէս կերպասի կտորներ, հագուստներ, տերեւներ, ծաղիկներ եւլն : Տղայոց ուշադրութիւնը պէտք է հրաւիրել այն գոյներու փոփոխութեանց վրայ զորս առարկաները կը կրեն ցորչափ հեռացնենք զանոնք :

8. Բայց աչքին դաստիարակութեան համար գործածուած բոլոր միջոցներուն մէջ, ոչ մէկը կրնայ հաւասարիլ գծագիտութեան դասին : Ուստի այս տեսակէտով միայն պէտք է սովորեցնել գծագիտութիւնը, եւ ոչ թէ լոկ այն նպատակաւ — թէպէտ ա՛յնքան օրինաւոր — որ գծագիտութիւն ուսանող աշակերտք օր մը կարենան զայն գործածել իրբեւ իրենց մասնաւոր արուեստին մէկ գործիքը : Քիչ մը վերը խօսեցանք մէկ քանի վարժութիւններու վրայ որոնք առնչութիւն եւ աղերս ունին այս ուսման նախաշաւիդ պայմաններուն հետ : Երբ աշակերտը կամաց կամաց հասնի աւելի կնճռոտ գծագրութիւններու, պէտք չէ շատանալ լոկ քանդակուած կամ վիմագրուած առարկաներ ընդօրինակել տալով, այլ նաեւ պէտք է ջանալ որ ուսանողն այս առարկաներն բնականին վրայէն գծէ, հասկցնելով տղուն այն եղանակը որով իր աչքը կը տեսնէ զանոնք, եւ որով կը նկարէ : Միւս կողմէ, երբ հարկ ըլլայ աշակերտին ընդօրինակել տալ քանդակուած կամ վիմագրուած տախտակներ, պէտք է նախընտրել զանոնք որոնց ներկայացուցած առարկաներուն բնականը կրնանք գտնել, եւ ուսանողն այսպէս պիտի կրնայ բաղդատել առարկան ու անոր պատկերը :

(Շար.)

Մ.



ՄԱՍՆԻՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋՆԻԿ

ԳԻՒՂԱՎԷՊ

Մասն Ա.

Հարսնեւորք մինչ երգերով ու պարերով
կը զուարճանային, մէկը եկաւ լուր տուաւ
Տ. Տաթեւի թէ խոստովանատունը ծուխ մը
կ'սպասէր իրեն:

ԽՈՍՏՈՎԱՆԱՏԱՆ ՄԷՁ

Տ. Տաթեւ հեւ ի հեւ խոստովանատուն
վազեց և հոն գտնելով իր ծուխերէն թա-
թօն, որ դեռ նոր ամուսնացած էր, ապշե-
ցաւ մնաց երբ անոր ձեռքը տեսաւ խնդրա-
գիր մը, որով կ'առաջարկէր լուծել իր պը-
սակը: Տ. Տաթեւ խնդրագիրը կարդալէ
վերջ, ըսաւ.

— Զաւա՛կս, ներելի չէ առաջարկդ ըն-
դունիլ. ես կրօնական մ'եմ, ամուսնութիւնն
ալ սրբազան խորհուրդ մ'է եւ անլուծելի.
«Զոր Աստուած զուգեայ՝ մարդ մի՛ մեկնեո-
ցէ» կ'ըսէ Ս. Դիրքը:

Թաթօ.— Սակայն, Տէր Հայր, ես իբրեւ
կոյս կին առի զինքը, և կուսական անրձու-
թենէն զուրկ գաայ:

Քահանան.— Դո՛ւն կ'ըսես այդ, զա-
ւա՛կս, այդ ա՛յնպիսի կնճռոտ խնդիր մ'է
որուն լուծման բանալին շատ դժուարին է
գտնել. տեսած ու լսած եմ շատ մը մարդեր
որք, ամուսնանալէ առաջ, հաստատեալ
սովորութեանց եւ աւանդական պատուիրա-
նաց հակառակ, դեռ նշանած, սիրոյ բոր-
բոքումէն մղուած, ծնողաց տկարութենէն
կամ անզգուշութենէն և կամ սիրած օրիոր-
դին անմեղութենէն օգտուած, պատկուելէ
առաջ կարգուած են իրենց նշանածին հետ,
և յետոյ այլեւայլ պատճառներով իրենց սի-
րած աղջիկէն պաղած, գործուած մեղանքը
պարտկելու տեղ, իրենց անխիղճ անզգա-
մութեան մէջ ա՛յնքան առաջ գացած են
որ աղջկան պատիւը գողնալէ վերջ, ի-
րենց վայրագ վրէժը լուծելու համար ալ

անո՛ր հետ պատկուած են, և առագաստի
գիշերէն վերջ, անմեղը մեղաւոր հռչակելու,
անպատուելու անլուր ու եղբրական վա-
տուութիւնն ունեցած են:


Թաթօ.— Տէր Հայր, կը բողոքեմ ձեր
այդ բացատրութեան դէմ. ես երբեք այդ
սիկարեան երիտասարդաց կարգէն չեմ: Ես
թէ եւ Ստանցի ծնողաց զաւակ, բայց աշխար-
հի պարծանք եղող մայրաքաղաքի մը մէջ
բարձրագոյն կրթութիւն առած եմ. արժա-
նապատուութեան զգացումը յիս խորատիւ
է. ես բարոյական նկարագրի տէր եմ. կը
յարգեմ վերաբերած կրօնքիս ալ, ապրած
երկրիս օրէնքին ալ պատուիրանքները: Ես
ունիմ այսօր բաւական մեծկակ հարստու-
թիւն, ընդարձակ վարկի տէր եմ, ըն-
կերութեան մէջ ալ առաջնակարգ դիրք ու-
նիմ: Հետեւապէս իմ բարոյական կրթու-
թիւնս չի ներեր ինձ սուտ խօսիլ ու վատու-
թիւն գործել: Երբ աղջիկ մը իր կուսա-
կան պատուոյն պահպանութիւնն ընելու
կարող չէ եղած, նման է՝ ա՛յն պահակ զին-
ուորին՝ որ թշնամոյն առջեւ բացեր է հայ-
րենիքին պաշտպանութեան դուռը: Անար-
դարանալի, անպաշտպանելի մատնիչ մ'է
այնպիսին: Յուզա, Մեհրուբան, Վասակ
մ'է այնպիսին: Կուսութեան պատիւը միշտ
բարձր պահելու համար, կուսադրոյժները
չարաչար պատժապարտելու է:

Քահանան.— Զաւա՛կս, կ'ընդունիմ թէ
պատուարժան եւ մեծաստիճան, պարկեշտ
մարդ մ'ես: Մեր երկրին պատիւ ու պար-
ծանք ես Վերսիւրենք հանճարդ, տաղանդդ:
Սակայն դուն ալ ինձ չափ և ինձմէ աղէկ
գիտես թէ այն օրիորդը՝ որուն ձեռքը սի-
րով ուզած ես, իր կարգին ինքն ալ մեր
երկրին բարձր դասու վերաբերող գերդաս-
տանի մը գեղեցկագոյն զաւակն է: Ազ-
նուական հարց մէջ բարոյականի տեսակէ-
տով, ամէնէն աւելի խստապահանջ հօր մը
աղջիկն է: Մանուշակ ինքն ալ քեզի
պէս նշանաւոր մայրաքաղաքի մը մէջ բարձ-
րագոյն կրթութիւն առած է: Մէկ հատիկ զա-
ւակն է Մանուշակ իր ծնողաց, որք իրենց
բարձր գիրքին համաձայն՝ իրենց աղջկան
բարձր կրթութիւն մը տուած են գիշերօ-
թիկ վարժարանի մը մէջ, ուր ամէն ազգի

մեծ գերդաստաններու աղջկներ կը կրէն ինչպէս պատուաւոր կերպով: Օրիորդն ու ծնողքն ալ քեզի չափ եւ քեզմէ աւելի պատուոյ ու բարոյականի նախանձախնդիր են: Օրիորդ մը՝ որ օրօրօցէն մինչեւ ամուսնութեան օրը սպասուէիներով շրջապատուած, վարժուհիներով պատսպարուած, ընտանեկան յարկին տակ խստաբարոյ ծնողքի մը խնամոտ եւ զգուշոտ պաշտպանութեան ներքեւ մեծցած, զարգացած է, ի՞նչպէս կարելի է ձեր մեղադրանաց, կամ վերագրած կուսական անպատուութեան գիշանելու չափ նուատանալ, և իր ծնողաց անաղարտ պատուոյն ու ստոյիկեան բարոյականին ստուերած ու արատ բերել: Զաւակս, պատուական ու սիրական բարեկամս, գիտեմ, դուն կրքոտ ու սրտոգ ես. քիչ մ'ալ մկալմաղձոտ, վերջին ծայր ալ կասկածոտ. որքան աւելի փափկասիրտ այնքան աւելի բարկասիրտ մէկը: Անգլիացիի պէս միաքղ դրածդ մինչեւ որ դուրս չհանես, քալած ճամբէդ ետ չե'ս դառնար, կեա'նքդ, գլուխդ ալ վրայ տալն կամ երթալն ալ գիտնաս իսկ: Օգտաւարիկ եւ փքոցուռոյց երեւակայութեանդ հեռադիտակով սովոր ես խոշորցնել ընկերական կարգուսարքին մէջ տեսնուած մանրէական եւ հիւլէական բոլոր երեւոյթները: Յարուցած խնդիրդ ո'րքան ալ լսելի դատուի, *cuius vult* կը վերցնէ: Մենք՝ քահանայ ու խոստովանաչար՝ դատաւորէ, փաստաբանէ, ծնողքէ, փեսէ, հարսէ, բժիշկէ աւելի լսած ենք կուսական եղծումներու դատերը, բողոքներ, երեւոյթներ: Գիտութիւնը, բժշկութիւնը, բնութիւնն ու շատ մը խղճամիտ քննութիւնք ու ճշմարիտ խոստովանանք ի վեր հանած են թէ կուսական աւերումներու շատ մը արկածներ չէ թէ անբարոյականութեան, այլ աննշան, անմեղ դէպքի մը, պատահարի մ'արդիւնք են սաէպ: Մարմնամարդական բուռն խաղեր, ինչպէս պատանեաց եւ երիտասարդաց, նոյնպէս և պատանուհեաց եւ երիտասարդուհեաց համար անասելի և անխոստովանելի կարգ մը անձնական, բնական, կամքին ու մտքին դէմ ընդդիմող բնազդումներու, զիւրարծարծ զգայարանաց խաղանքն, գրգռանքն ու տոչորանքն ըմբռնուած լոկ ու սոսկ ան-

հատական ծարաւին յուզմանց պապակ մը բուծելու, գոհացնելու անխուսափելի բերումները, երկիւղի, երազափորձի, հիւանդացման, ձի հեծնելու, ցատկելու, հետիոտն երկար ատեն ճամրորդելու, գլորուելու, ծանր բեռ վերցնելու և այլ կարգ մը ծանօթ թէ անծանօթ բորբոքիչ պարագաներ առիթ եղած են երեսը աւազանի միւռոնէն եւ ծնողաց շրթունքէն զատ օծում ու համայր շիտեսած, մօրը գրկին մէջ եւ տան յարկին տակ, օտարի մը աչքին իսկ չերևցած և թալարի մը մէջ բուսածի պէս մեծցող շատ մը անմեղ օրիորդներու կուսական թաղանթին խզման, յանգէտս իրենց եւ իրենց ծնողաց, կարելի է եւ շատ հաւանական է որ — եթէ ճիշտ է ձեր խոստովանական յայտարարութիւն — ձեր կնոջ նկատմամբ յարուցուած կուսական եղծանքի երեւոյթը յիշած կարգ մը դիպուածական ու չքմեղելի պատճառներէ միոյն բնական՝ ոչ թէ մեղանշակա՛ն արդիւնքն եղած լինի: Մենք՝ քահանայքս՝ այս տեսակ կուսական, ամուսնական, կնճոտ, քարուտ, փշուտ խնդիրներու մէջ շատ ճամրորդած, երկրաչափած եւ աշխարհագէտ եղած ըլլալով, ունինք փորձառութիւններ, որ թանկագին հմտութեանց չափ մեծ արժէք, կշիռ ու հեղինակութիւն ունին: Կամքէ անկախ, դիտումէ զուրկ, դիպուածական, անմեղ բանի մը՝ կամաւոր ու նպատակաւոր յանցանքի, մեղանշանքի զոյն ու դատական բանաձեւ չընծայենք: Ոճրագործաց ոճրագործը կը լինի մարդ երբ անմեղի մը, նա մանաւանդ աղջկան մը, եւ այն ալ միամօր եւ միահօր գեղեցիկ, պատուական, ուսեալ, զարգացեալ և ընդհանուր ազգին պարծանք եղող աղջկան մը պատիւը կ'անպատուէ:

Թարօ. — Տէր Հայր, քա՛ն լիցի:
(Շար.)



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄԱՐԳԱԳՆԵՐ

Արուեստական մարգագետինները, ինչպէս իրենց անունէն ալ յայտնի է, միշտ մարդուն աշխատութեան արդիւնք են։ Անոնք կը կազմուին ընդհանրապէս պարկճաւոր (légumineuses) բոյսերով եւ կը ծառայեն բազմաթիւ արջառներ սնուցանելու եւ չափ աղբ արտադրելու։ Մէկ քանի տեսակ արուեստական մարգագետիններ կան։

Երկարակեաց բոյսերու արուեստական մարգագետինք. — Երկարակեաց գլխաւոր բոյսերն են ասպառ (luzerne, գապա եօնճա), երեքնուկը (sainfoin, էվլիյա օթու), մշակուած որոմը (ray-grass, չիմ, չիմէն)։

Ասպառ արուեստական մարգագետիններու գերազանց բոյսն է։ Խորունկ, լաւ աղբուած, կէս խոնաւ հողը կը սիրէ։ Ասպատն ընդհանրապէս կը սերմանուի գարնան, սերմը սիւնելով, եւ ապա լողքարով կը ծածկեն զայն։ Ասպառը երեք տարի վերջ միայն կը խտանայ, 0.6-էն մինչեւ 0.80 հարիւրորդամէդր բարձրութեան կը հասնի եւ ընդհանրապէս 7—8 տարի կը դիմանայ։ Յետոյ կ'սկսի ծերանալ։ Զմրան վերջը, լաւ է ցաքանել եւ մոխիրով ծածկել զայն։ Գարնան, կոյալուր կամ բօդասի քլորուտ (chlorure de potassium) կուտան անոր։ Եթէ փոխացած գաճ ցրցքնուի մարգագետիններէս, ընտիր արդիւնք կուտայ։ Ասպառը տարին 2—3 անգամ կը հնձուի։

Երեքնուկը ուղղարմատ բոյս մ'է որ վարդագոյն ծաղիկներ ունի։ Շատ լաւ յառաջ կուգայ կրային եւ խորունկ հողերու։ Մէջ։ Մարտին կամ Ապրիլին կը ցանուի, հունտը սփռելով։ Իր միջին բարձրութիւնն է 0.50-էն մինչեւ 0.60 հարիւրորդամէդր։ Երեքնուկն երկու տեսակէ։ Բաւարակ երեքնուկը (esparcette) որ տարին մէկ անգամ կը հնձուի, եւ ջերմիկ երեքնուկը (sainfoin chaud) որ տարին երկու հունձք կուտայ։ Վերջին տեսակը լաւագոյն հող մը կը խնդրէ քան առաջինը։ Երեքնուկին տեւողութիւնը 6—8

տարին չանցնիր։ Արեւուն մէջ չորցուելով, ընտիր սնունդ մը կը կազմէ ձիուն համար։

Մշակուած որոմը (չիմ) սիզատեսակ բոյս մ'է որ պարտէզներու դալարութենէ (չիմքն) կը կազմէ։ Երկու տեսակ է, իտալական եւ անգլիական։ Ընդհանրապէս գարնան կը սերմանուի արմտիքի մը հետ, կամ առանձին կը ցանուի աշնան։ Թաւմ եւ հիւթեղ հողերը կը սիրէ, եւ ընտիր խոտաճարակ մը կը կազմէ։ Բայց սլայմանաւ որ կանուխ հընձուի, վասն զի եթէ չափազանց հասուննայ, կը կարծրանայ եւ իր յատկութիւնը կը կորսնցնէ։ Եթէ, իբրեւ արօտ, անասուններէն կրճուի, ծայրայեղ արագութեամբ կ'աճի եւ գրեթէ անսպառելի դրամագլուխ մը կը կազմէ։ Ասոր հակառակ, սակայն, պատշաճ չէ մէկ քանի տարիէն աւելի թողուլ զայն միեւնոյն հողին մէջ։

Երկամեայ կամ միամեայ բոյսերու արուեստական մարգագետինք. — Այս կարգի արուեստական մարգագետինները մանաւանդ կը կազմուին երեք տեսակ առուոյտներէ (trèfle, եօնճա)։ Հասարակ կամ մանուշակագոյն առուոյտ, կարմիր (incarnat) առուոյտ եւ ճերմակ առուոյտ։

Հասարակ առուոյտը կը ցանուի գարնան, հունտը սփռելով արմտիքի մը հետ, աւելի փխրուն քան կուռ, կրային, թափանցելի եւ բօդասական աղբով զօրացած հողի մը մէջ։ Լաւագոյն է զատ ցանել նախ արմտիքը, յետոյ առուոյտը։ Երբ արմտիքը հասուննայ, արտը կը հնձեն եւ այլեւ առուոյտին չեն դաշիր։ Ի հարկին պէտք է անասնոց ճարակել տալ, եթէ լաւ արմատացած է եւ եթէ հողը բաւական չոր է անասնոց կոխկոտուքին տոկալու համար։ Յաջորդ տարին է միայն որ առուոյտը հունձք պիտի տայ։ Տարին սովորաբար 3 անգամ կրնայ հընձուիլ, բայց կարելի է բացառաբար չորս անգամ ալ հնձել, երբ բոլորովին նպաստաւոր սլայմաններու մէջ մշակուած է։ Առաջին հնձումը կը կատարուի երբ բոյսը կատարելապէս ծաղկած է։ Եթէ հունտն առնել կ'ուզուի, փորձառութիւնը ցոյց տուած է որ երկրորդ հնձքէն պէտք է խնդրել զայն, զի բոյսն աւելի լաւ եւ աւելի հաւասարապէս ծաղկած կ'ըլլայ քան

առաջին հունձքի ատեն : Հասարակ առուոյտը կրնանք չորցնել նոյն խնամքը տալով անոր , ինչ խնամք որ կուտանք հասարակ խոտին : Տասնևութ ամիս վերջը , առուոյտը դեռ կրնայ աճիլ , բայց բաւական արդիւնաւոր չըլլար . ուստի կը հերկեն զայն եւ անոր տեղ ուրիշ մշակութիւն մը կը դնեն : Կարմիր առուոյտն աւելի արագ կ'աճի քան սովորական մանուշակագոյն առուոյտը : Սեպտ . ի վերջերը , արմտիքէ մը և թեթեւ հերկումէ մը յետոյ սերմանուելով աւելի չոր քան խոնաւ հողի մը մէջ , շատ շուտ կ'աճի , եւ Մայիսէն , երբեմն ալ Ապրիլէն սկսեալ , խոտածարակ կուտայ : Ընդհանրապէս կանանչ կը կերցնեն զայն , վասն զի երբոր չորնայ , միջակ խոտածարակ մը կը կազմէ : Տարին մէկ անգամ կը հնձուի : Գալով միացածին , ինչ որ ըսինք հասարակ առուոյտին համար , նոյնը կը պատշաճի նաեւ կարմիր առուոյտին :

Սպիտակ առուոյտը գրեթէ ամէն տեղ կը յաջողի . ան ալ գարնան կը ցանուի , եւ ընդհանրապէս , իբրեւ արօտ , կը կերցնեն անասուններուն :

Թրմուսը կամ եգիպտոլոռը (աճը պազլա) բոյս մ'է որ ասպատին կը նմանի իր յօրինուածքով , բայց անոր չափ չի բարձրանար , աւելի պատատու է և դեղին ծաղիկներ կուտայ փոխանակ մանուշակի : Թրմուսը կը ցանուի էքզար գլուխ 15—18 քիլօ համեմատութեամբ , և առուոյտին հետ միեւնոյն պայմաններուն մէջ կը մշակուի : Արջառք շատ կը սիրեն զայն , և որովհետեւ փքուռուցութիւն յառաջ չի բերեր , կրնանք արօտավայրին մէջ կերցնել զայն առանց վրտանգի : Թրմուսը կրնայ մատակարարել ընտիր չոր բուսածարակ մը , բայց ընդհանրապէս կանանչ կ'սպառեն զայն :

Ը Ն Դ Ե Ղ Ի Ն Ք

(Շարունակելի)



Թ Յ Բ Ո Ն Ն Ե Ր Ը

Սուրբ խրտիչներ ,
ձերմակ , անվէր
Կը ժպտին ,
Բաժակներուն
Ծոցը՝ մարմրուն
Ժպտով սին... :

Պզտիկ խինդեր ,
Պարզ ու անտէր ,
Աննըջան ,
Կը խօսին լուռ ,
Ցաւերուս սուր
Անսահման :

Բիւրեղային
Հոգիներ սին
Ինքնարոյս ,
Հեղիկ՝ անդորր
Կը նային խոր
Աչերուս ... :

Ու փոխ կ'առնեն
Իմ աչերէն
Խոկումներ ,

Թափանցելով
Սիրտըս խռով ,
Մըթաստուեր ,

Ինչպէս ցոլուն
Են ամպերուն
Յոյզն ու խոց ,
Յաւն երկինքին ,
Վարն , ալիքին ,
Առուին ծոց ,

Յուրտ , հէգ բիբեր
Որ չէք մրափեր ,
Ձէք խփուիւր ,
Կոպեր չունիք ,
Բիբեր պզտիկ ,
Խոնջ , ցանցիր :

Աննիւթ խաղեր ,
Հոգիս ծեր՝
Դըրացի ,
Յաւերուս մէջ ,
Ո՛հ , ծեղ անվերջ
Սիրեցի... :

ԵՐԽԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Յակոբոսին գլուխը ճաղատ է :

— Հիացի՛ր , զաւակս , կ'ըսէր անցեալ օր իր տղուն , հիացի՛ր բնութեան կանխատեսութեան վրայ որ կը խլէ մարդուս մազերը ճիշդ այն պահուն երբ ան զանոնք իր ձեռքով պիտի փեթոտէր , անշուշտ իր տղայութեան ատեն ըրած յիմարութիւններուն վրայ խորհելով :

* * *

Դատարանին մէջ :

— Դատապարտեա՛լ , աս տասնըհինգերորդ անգամն է որ դիմովութեան համար կը ձերբակալուիս կոր . անուղղայ մըն ես դուն :

— Տէր նախագահ , իմ նախնիքս միայն ջուր խմած են , և ես դիտութեան օգուտ մը ընել ուզեցի ապացուցանելով որ ժառանգականութեան օրէնքներէն կարելի է եղեր հրաժարիլ :

Արժանատի . — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐԻՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրուռ

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն զբոյլ մը, որ 13—14,000 բառերու ու ոճերու եւ ընթացական ասացումներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ զբոյլը պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնօրեցութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուշադրութիւն գործարարին մտաւային



Որ կը մրցի բոլոր կարի մեքենաներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Բէօրըիւի խան, Թիւ 3:

Մասնանիւղ. — Ղալաթիա, Պէօլիւք Միւլէթ խան, Թիւ 33:

Գնողներու համար վճարման ամէն տեսակ զիւրութիւններ:

ԱՌԵԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. Ի Ս Ա Գ Ո Ւ Լ Ե Ա Ն

ՄԵՇԵՐԱՆԱԿ ՃՈՒ ՄԹԵՐԲ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւար գին

Պահե՛ք զաբույժէլս պէյ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ և Թէ՛ գաւառի մեր պատուարժան ընթերցողներուն կը յանձնարարենք սոյն վստահելի վաճառատունն, որ երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք մը զբաւած է, և ամէն տարի չի զլանար իր Թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց:

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չղբւըջաք: — Վաճառատան մարդային ուշ դրէ՛ք:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ և տարեկան:

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 3,250,000

ԱԼԼԵՍԱՆՁՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԷՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 87,455,645

Ընկերութեանց Դրամաւումն է «Քրէտի Լիօնէ»,

ՌԷՆԱՆ-ՎԵՍՏՐԱԼԻԷՆ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ի Կլաուպալս

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆՆԱԿ.— Ստամպուլ, Հաճօրուլօ Խան, Թիւ 53, 54, 55, 56

Լիազօր Ներկայացուցիչ

Գ. ՃԵՐԱՏԵԱՆ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մախաւան հին տեղը

Ընդհ. Գննիչ
Ա. ՀԻՒՐԱՐԻՆՁ

Ընդհ. Դործակալ
ԹԷՌՏՈՐ ՌԷՐԷՆ

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

Հանրագիտակի վերաբերեալ ամեն գրութիւն պէտք է ուղղել Նեան Պերպէրեան
սպարանը, Էսփ գապթիյէ հասկէսի քիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ Խմբագրութիւն «Հանրագիտակի»